ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghatg@mail.ru

21.12.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Վ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու նիստի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 30-Ա, N 31-Ն, N 32-Ա, N 33-Ա, N 34-Ն, N 35-Ն և N 36-Ա որոշումները:

Առդիր 12 թերթ

Շաղատ գյուղական համայնքի ղեկավար՝ Տ.Խաչատրյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ... ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ...
ՄՈՒՏՔ N 10326
«28» 12 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghatg@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30-Ա
21 դեկտեմբերի 2016 թվական

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼԵԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով , համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության որոշման նախագծի քվեարկության արդյունքներով `կողմ` 4, դեմ` 0, ձեռնպահ` 0 , ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է`

Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի հետևյալ օրակարգը.

1.ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը հաստատելու մասին

2.ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու մասին

3.ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին

4.ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարումների դրույքաչափերը սահմանելու մասին

5. ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին

6. ՀՀ Սյունիքի մարզի Շաղատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի ավագանու 2013

թվականի ապրիլի 11-ի N 8-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ________Վ.Հովհաննիսյան
Կողմ՝ ________Վ.Միրզախանյան
Կողմ՝ ________Ա.Պետրոսյան
Կողմ՝ ________Կ.Սարգսյան

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ համայնքի ղեկավար՝ Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghat.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն
21 դեկտեմբերի 2016 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով, 32-րդ հոդվածի 2-րդ կետով և « Իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով , որոշման նախագծի քվեարկության արդյունքներով ՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ՀՀ Սյունիքի մարզի Շաղատի գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ________Վ.Հովհաննիսյան
Կողմ՝ ________Վ.Միրզախանյան
Կողմ՝ ________Ա.Պետրոսյան
Կողմ՝ ________Կ.Սարգսյան

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավար՝ Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

# ՇԱՂԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԾՐԱԳԻՐ

ՇԱՂԱՏ 2016

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ... 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ... 4
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ... 4
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ... 4
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ... 5
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ... 5
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ... 6
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ... 6
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ... 8
   3.1. Համայնքի զարգացման տեսլական ... 8
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ... 9
4. ՀՀԶԾ ֆինանսավորում ... 10
5. ՀՀԶԾ մոնիթորինգ ... 11

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համաքաղաքացիներ,

Ձեր ձեռքում է Շաղատի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման ,ֆինանսական տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթը՝ համայնքի զարգացման ծրագիրը , որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին ,այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները ( ակտիվները ) ,պարտավորությունները տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը , ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները :Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված ( տնտեսական, սոցիալական ,շրջակա միջավայրի և այլ գործոններ ):

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել ինչպես նախկինում Ձեր քննարկմանն ու հավանությանն արժանացած իմ նախընտրական ծրագիրը, այնպես էլ պետական ,մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

Հարգանքով՝ Շաղատ համայնքի ղեկավար Տիգրան Խաչատրյան

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Աշխարհագրական դիրքը

Սյունիքի մարզի Շաղատ համայնքը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արևմտյան մասում:

Համայնքի վարչական տարածքը կազմում 11180 հա :

Համայնքը գտնվում Հայաստանի մայրաքաղաք Երևանից 200 կմ հոռավորության վրա,Սյունիքի մարզկենտրոն Կապանից 120կմ հեռավորության վրա, Գորիս –Ստեփանակերտ մայրուղուց 8 կմ, ծովի մակարդակից ՝1750 մ բարձրության վրա, գյուղի միջով անցնում է Արիգլու գետը, սահմանամերձ է Նախիջևանին:

Համայնքով անցնում են Բալաք և Մուցք ճանապարհները:

Պատմական համառոտ ակնարկ

Համայնքն հին և հարուստ կրնսագրություն ունեցող բնակավայրերից է ,որի տարեգրությունն անխզելիորեն կապվում է Սյունիքի պատմության հետ և կազմում է նրա մի մասը:Շաղատը եղել է պատմական Սյունիքի մայրաքաղաքը,ավելի շուտ ՝Սյունիքի ամենակարևոր և ամենահարուստ գավառի՝ Ծղուկի մայրաքաղաքը:Ծղուկ գավառի կենտրոն Շաղատում է ամրացել Սյունիքի հզոր իշխանությունը:Առաջինն այստեղ է Սյունիքն ընդունել քրիստոնեությունը: Ըստ Օրբելյանի Սյունաց աշխարհում եղել են 43 բերդ և 48 վանք,որոնցից

միայն Ծղուկում ՝ 10-ից ավելի բերդ և և նույնքան վանք:Այստեղ են ծնվել Սյունյաց Անդոկ իշխանը, նրա դուստրը Փառանձեմ թագուհին՝ Արշակ Բ թագավորի կինը,Պապ թագավորի մայրը:

Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

| Համայնքի բնակչության թիվը 1140 ,այդ թվում | | Բնակչության տարիքային կազմը | | | | | | | | | | | | սոցիալական կազմը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | գործազր 45 | |
| կանայք | տղամարդիկ | 0-1 | 1-2 | 3-4 | 5-6 | 7-10 | 11-14 | 15-17 | 18-22 | 23-45 | 46-62 | 63 և ավել ի | | թոշակառուներ | միակողմանի ծնողազուրկ | հաշմանդամներ | կին | տ ղ ա |
| 610 | 530 | 12 | 18 | 34 | 49 | 90 | 70 | 58 | 69 | 405 | 238 | 97 | | 125 | 3 | 50 | 25 | 2 |

Տեղական ինքնակառավարման մարմինները

Ծաղատ համայնքում 2016 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում Ծաղատի համայնքի ղեկավար է վերընտրվել Տիգրան Խաչատրյանը և ձևավորվել է 5 անդամից բաղկացած ավագանու կազմ:Ծաղատի համայնքապետարանի աշխատակազմը ,ըստ համայնքի ավագանու 2015թ. 28.12. 2015թ.թիվ 26-Ա որոշման բաղկացած է 14 հաստիքից,այդ թվում 2 համայնքային ծառայողներ:

Համայնքային ենթակայության տակ կա 4 կազմակերպություն ,աշխատակիցների թիվը կազմում է 25 ( աղուսյակ 1)

| N | ԿԱՌՈՒՑՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ |
|---|---|---|
| 1 | ՇԱՂԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ | 14 |
| 2 | ՇԱՂԱՏԻ ՆՈՒՀ ՀՈԱԿ | 9 |
| 3 | ՇԱՂԱՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ | 1 |
| 4 | ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ | 1 |

Աղուսյակ 1.Շաղատի համայնքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թիվը

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում

Բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացնում է Շաղատի համայնքապետարանը։

Համայնքում առկա է 36 բազմաբնակարանային շենքերը , որոնք կառուցվել են 1970-1985թթ.:

Մեկ շենք հինգ հարկանի է , մնացած 35 շենքերը 2-ու հարկանի են

Բազմաբնակարանային շենքերի թրվը -36

Բնակարանների թիվը- 146

Առանձնատներ-87

Ընդամեն մակերեսը -23407 ք.մ

Վթարային առանձնատներ -27

Հողօգտագործում

Համայնքում հողերի սեփականաշնորհումը կատարվել է 1991թ. որի ընթացքում սեփականաշնորհումից օգտվել են 130 ընտանիքներ:Սեփականաշնորհված 1 հողաբաժինը կազմել է 2 հա: Ներկայումս քաղաքացիների սեփականության հողերը կազմում են 630 հա:

Վերջին տարիներին ավելացել են բնակիչների կողմից գյուղ.նշանակության հողերի համայնքների ետ վերադարձնելու դեպքերը:

| | |
|---|---|
| Համայնքի վարչական սահմաններումընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը ,որից ՝ հա | 11172.71 |
| Բնակավայրի հողեր | 106.83 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 10575.48 |
| Անտառային հողեր | 397.64 |
| Արդյուաբերության ,ընդերքօգտագործման և այլ արտադական նշանակության հողեր | 0 |
| Էներգետիկայի ,կապի, տրանսպորտի ,կոմունալ ենթակառուցվածքների հողեր | 24.06 |
| Հատուկ պահպանվող տարածքների հողեր | 38.2 |
| Հատուկ նշանակության | 0 |
| Ջրային հողեր | 30.50 |
| | |

Աղուսյակ 3.

Համայնքի հողատարածքները ըստ նպատակայի նշանակության

Գյուղատնտեսություն

Շաղատը համայնքը զբաղվում է ,անասնապահույամբ ,գյուղատնտոսությամբ

Գյուղատնտոսությամբ զբաղվողների թիվը կազմում է բնակչության 45 %-ը:

Բնակչության կողմից մշակվող հողատարածությունների չափերը տարբեր են սկսած 100քմ

Փոքր հողակտորներից մինչև 10 հա: Հիմնական մշակաբույսերն են ցորեն,գարի,հաճար,կարտոֆիլ ,կաղամբ և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության զարգացման և հողերի արդյունավետ մշակության գործում լուրջ խոչնդոտ է հողերի մասնատվածությունը,որը ավելի ծախսատար և աշխատատար է դարձնում գյուղատնտեսությունը:Համայնքում մթերքների վաճառքի շուկայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում տնտեսությունների արտադրանքի սպառման վրա: Համայնքում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունները ունեն 1142 գլուխ խոշոր եղջերավոր անասունն 2854 գլուխ մանր եղջերավոր անասուն , 3011 թև թռչուն:

| | |
|---|---|
| Ընդամենը գյուղատնտեսական գշանակության հողեր/ հա / | 10430.03 |
| Վարելահող / հա / | 982.52 |
| Տնամերձեր / հա / | 53.91 |
| Արոտ /հա / | 7255.19 |
| Այլ հողատեսքեր / հա / | 2138.41 |

Աղուսյակ 4

Համայնքի գյուղատնտեսակնան նշանակության հողեր

Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Քանի որ համայնքը բացի առանձնատներից ունի նաև համայնքային և սեփական

բնակարանային ֆոնդ , համայնքում պետք է առանձնացվի տարածք աղբահանություն կատարելու համար ,որը չի գործում համայնքում ֆինանսական միջոցների սղության պատճառով: Որի պատճառով համայնքում տարեկան 2-5 անգամ կազմակերպվում է շաբաթօրյակնոր:

Համայնքում տարեկան կազմակերպվում է ծառատունկի և կանաչապատման աշխատանքներ:

Համայնքը տարածաշրջանի հետ կապված է երթուղային ավտոբուսով, իսկ մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ՝ անձնական օգտագործման մեքենաներով և որթողային տաքսիներով:

Ձմռան ընթացքում ճանապարհները դառնում են դժվարանցանելի ՝համայնքում ձույն մաքրող տեխնիկա չունենալու պատճառով:

Մայրուղուց մինչև համայնք ճանապարհը սպասարկում է Սիսիանի ճանբաժնի կողմից, որը կատարվում է անբավարար:

Առևտուր և սպասարկում

Համայնքում գործում է 5 առևտրի օբյեկտ ,որոնք սպասարկում են բնակչության առևտուրը:

Կրթություն ,մշակույթ և սպորտ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց ,որտեղ սովորում են 170 աշակերտ:

Դպրոցը ապահոված մանկավարժ կադրերով ՝ որից 24 մանկավարծ բարձրագույն կրթությամբ:

Դպրոցը 2002 թվականին մասնակի վերանորոգվել է միջազգային կազմակերպության / ԿՕՃ / -ի կողմից ,բայց տարիներ շարունակ չվերանորոգելով տանիքը նորից վերանորոգման խիստ կարիք ունի :

2015 թվականին ամբողջովին վերանորոգվել է դպրոցի տանիքը:

Դպրոցը չունի կաթսայատուն , լոկալ ջեռուցում:

Դպրոցը տաքցվում է փայտե վառարաններով:Մարզադահլիճը չի ջեռուցվում,որը ազդում է

Ֆիզկուլտուրն ձմռան ընթացքում նորմալ անցկացնելուն:

Համայնքում գործում է նախակրթարան երկու հարկով :Որտեղ հաճախում են 45 երեխա, ունի 9-ը աշխատող: Նախակրթարանի 1- ի հարկը վերջին տարիներին վերանորոգվել է ,բայց երկրորդ հարկը ունի վերանորգման խիստ կարիք:

Համայնքը ունի մշակույթի տուն ,որի տարածքը ամբողջովին վերանորոգված է :

Բայց զբաղեցրած տարածքը շատ փոքր է համայնքում միջոցառումներ կազմակերպելու համար:

Համայնքում գործում է գրադարան ,որն ունի 6500 կտոր գրականություն:Գրադարանի զբաղեցրած տարածքը ունի խիստ վերանորոգման կարիք, չունի գույք:

Մարզահրապարակ չունենալով համայնքի երիտասարդությունը զրկված է մարզվելու հնարավորությունից :Մրցումներ կազմակերպվում են երիտասարդների կողմից հարմարեցված ֆուտբոլի դաշտում:

Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է մեկ բուժկետ ,որը վերանորոգվել է « Վոլդ Վիժն Արմենիա » կազմակերպության կողմից:

Բուժկետն ունի մեկ աշխատող:

Համայնքի բնակչության բուժսպասարկումը իրականացվում է նաև Անգեղակոթի բուժ ամբուլատորիայի կողմից:

Համայնքը չունի հանգստի գոտիներ, խաղահրապարակներ

Համայնքի ընդհանուր բյուջեն

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2015 թվականի դրությամբ կազմում է 55392.8դրամ :Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուրները կազմում է

6834.3 դրամ:

Պատմական և մշակույթային հուժարձաններ

Շաղատի տարածաշրջանը հարուստ է պատմամշակույթային հուշարձաններով որոնք տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի:Շաղատի Նարին կալա բերդավանը հանդիսացել է գավառի կենտրոն 4-9 դարերում :

Շաղատում է գտնվում սուրբ Գևորգ եկեղեցին կառուցված 1840թ.որը վերանորոգվեց 2014թ.:

Համայնքը ունի թանգարան ,որտեղ պահպանվում է գյուղի հնությունները

2.3 Համայնքում իրականացվում են մի շարք ծրագրեր՝

1.«Շեն » բարեգործական հիմնադրամի կողմից իրականացված և իրականացվող՝

ա)Համայնքում 2015 թվականին վերանորոգվել և կառուցվել է 1կմ ոռգման ջրատար

բ) 2016 թվականին ձեռք է բերվել հացահատիկահավաք կոմբայն

գ) 2016 թվականին կատարվել է խմելու ջրի կապտաժների վերանորոգում,փականների տեղադրում:

դ) ընդացքի մեջ է ֆուտբոլի դաշտի , խաղահրապարակի , սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքները

ե) 2017 թվականին կիրականացվեն հաճարի ձավարաղացի,կտավատի ձեթի արտադրամասի,հեռագնա արոտներում կաթի սրահի կառուցման և ցանկապատման, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման, դպրոցի սպորտ դահլիճի գույքի ձեռքերման ,

ըմբշամարտի խմբակի տարածքի վերանորոգման և գույքի ձեռք բերման , բուժկետի վերանորոգման աշխատանքներ:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանական

կանխատեսումներ

Համայնքի ֆինանսական միջեցները գոյանում են համայնքի սեփական եկամուտներից և համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրամադրվող դոտացիայից:

2017-2021թթ. համակնքի բյուջեի եկամուտները կանխատեսելու նպատակով ներկայացնում ենք նախորդ տարիների եկամտային փաստացի ցուցանիշները ըստ առանձին եկամտատեսակների :

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետությունում գործող տարբեր հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ,իսկ համայնքային բյուջեներում կնախատեսվն համայնքային ներդրումները:

| Եկամտատե-սակներ | 2015 փաստ. | 2016 | 2017 նախ. | 2018 կամխ. | 2019 կանխ. | 2020 կանխ. | 2021 կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գույքային հակեր անշարժ գույքից(հողի հարկ) | 3521.5 | 2365.3 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 |
| Գույքա հարկ | 1498.6 | 1451.4 | 1750.0 | 1800.0 | 1800.0 | 1800.0 | 1800.0 |
| Տեղական տուրք | 65.0 | 50.0 | 65.0 | 65.0 | 70.0 | 70.0 | 70.0 |
| Հիմնական միջոցների օտարումից մուտքեր | 0 | 288.3 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հողի վարձակալությունից եկամուտներ | 1000.3 | 1160.4 | 1200.4 | 1200.4 | 1230.1 | 1230.1 | 1230.1 |
| Ընդամենը | 6085.4 | 5315.4 | 6515.4 | 6565.4 | 6600.1 | 6600.1 | 6600.1 |

Աղուսյակ .Համայնքի եկամուտների կանխատեսումները

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Շաղատ համայնքի կայուն զարգացման առջև ներկյումս ծառացաչ խաչընդոտներն  ու դժվարություններն են՝ հետևյալ ուղղությունների.

1) Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանումն--ներդրողների համար ոչ գրավիչ միջավայրը,սպառման խնդիրը
2) Համայնքի գույքի կառավարումը- գյուղ.նշանակության հողերի մասնատվածություևը
3) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմկերպումը- ոչ բարվոք վիճակում գտնվող շենքը ,գույքը,
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը ՝ երիտասարդության ներգրավմամբ – ֆինանսական միջոցների սղություևը,
5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը- ֆինանսական միջոցների սղությունը ,աշխատատեղերի բացակայությունը,
6) Ֆիզիկական կուլտուրայի  և առողջ ապրելակերպի խրախուսումը- համայնքում մարզական նշանակության կառույցի,
7) Համայնքում բնակարանային շինարարության խթանումը- բնակչության ցածր եկամուտների պատճառով հնարավորություն չի եղել սեփականության իրավունքով հատկացված տնամերձ հողամասերը կառուցապատել,

8)Համայնքի կառուցապատումը ,բարեկարգումը և կանաչապատումը ,համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը , ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը- ֆինանսական միջոցների սղությունը,

9) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը,համայնքի ներճանապարհային ենթակառուցվածքների պահպանումըն շահագործումը – ֆինանսական միջոցների սղությունը,

10) պետության պաշտպանության իրականացման աջակցությունը- ատագաղթը

11) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,

12) համայնքում գյուղատնտեսության խթանումը-մասնատված հողակտորները,ոռոգման ցանցի բացակայությունը,

13) համայնքում շիջակա միջավայրի պահպանությունը- աղբի հեռացման համար ֆինանսական միջոցների սղությունը

14)համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում- ֆինանսական միջոցների բացակայությունը ,

15) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը- բնակարանային պայմանները ,սոցիալական վատ վիճակը,գործազրկությունը,

16) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը,արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը-ֆինանսական միջոցների սղությունը

17 համայնքայի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումւ

18)համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը և- բնակչության ոչ իրազեկվածությունը,

19 բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային , կրթական,առողջապահական,մարզական,սոցալական և այլ հաստատությունների ֆինանսավորում

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի ,հնարավորությունների և սպառնալիքների

( ՈւԹՀՍ) վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| *Էկոլոգիական վտանգ ներկայացնող խոշոր ձեռնակությունների բացակայություն և համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ:<br>*Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր,ալպիական արոտավայրեր գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար:<br>*Անխափան գործող ֆիքսված հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ՝« Վիվասել ՄՏՍ», «Յուքոմ » և « Բիլայն » շարժկան կապի և ինտերնետ ծառայություններ:<br>*10հեռուստաալիքների և կաբելային հեռուստա-տեսության հոռարձակում: | *Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, մարզկենտրոն Կապանից և միջպետական մայրուղուց:<br>*Անբարեկարգ փողոցներ<br>*Բազմաբնակարանային շենքերի անբարեկարգ տանիքներ և բակեր:<br>*Անբարեկարգ ոռոգման ցանց:<br>Անբարեկարգ խաղահրապարակներ և կանաչ տարածքներ:<br>*Գյուղատնտեսական մթերքների շուկայի և առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառի բացակայություն:<br>*Սոցիալապես անապահով ընտանիքների, |

| | |
|---|---|
| *Ամբողջ համայնքը գազաֆիկացված է:<br>24 ժամյա ջրամատակարարում:<br>* | միայնակ թոշակառուների,ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների մեծ թիվ համայնքում: |
| Հնարավորություններ | Սպառնալիքներ ( վտանգներ) |
| *Որակյալ աշխատուժի մեծ պոտենցյալ՝ տարբեր մասնագիտությունների բարձրագույն և մասնագիտական կրթությամբ կադրեր,որոնք կարող են կազմակերպել գյուղատնտեսության ,կրթության ու դաստիարակության ,շինարարական և այլ աշխատանքներ:<br>*Հիմնականում պահպանված նախադպրոցական, կրթական և մշակութային հիմնարկների տիպային շենքեր:<br>*Համայնքում կառուցված 1840թ սուբ Գևորգ եկեղեցի ,բազմաթիվ խաչքարեր,նարին կալա բերդ ամրոցը, համայնքում գործող թանգարանը | *Արտագաղթի աճ:<br>*Որակյալ մարդկային ռեսուրսների կորուստ՝ կապված արտագնա աշխատանքային միգրացիայի հետ:<br>*Քաղաքացիների անվճարունակության պատճառով գյուղատնտեսական նշանակության հողեր համայնքին հետ վերադարձում և դրանից բխող համայնքային եկամուտների ( հողի հարկ և գույքահարկ) նվազում: |

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականն է՝

նոր որակի գյուղական միջավայրով ձևավորված բնակիչների, հյուրերի գրավիչ գյուղական համայնք գ.Ծաղատ, մատչելի որոկյալ կրթական ,մշակութային ու մարզական հաստատություններով ,երիտասարդության ժամանցի կազմակերպման համար նպաստավոր պայմաններով ,համայնքի բնակիչների համար բարելաված կենցաղային և բնակարանային պայմաններով ,փոքր և միջին արտադրական ձեռնարկությունների զարգացման համար գրավիչ գործարար մրջավայրով:

Ծաղատ համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի հեռահար նպատակն է ապահովել համայնքի կայուն զարգացումը մոտակա տարիների ընթացքում:

Համայնքի զարգացման ռազմավարությունը ,այն է՝ շարունակական բարեփոխումների և միջոցառումային ծրագրերի միջոցով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական ,մշակութային,առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները,

համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման և ձեռնարկատիրական գործունեության

համար գրավիչ:Ընտրվել է համայնքում առկա իրվիճակի ,պոտենցյալի,ինչպես նաև ՈՒԹՀՍ

(SWOT ) վերլուծության արդյունքում :

Համայնքի զարգացման ծրագրի ռազմավարական նպատակներն են՝

1. Ստեղծել նոր որակի գյուղական միջավայր,
2. Զարգացնել մշակութային և մարզական կյանքը՝ երիտասարդության ներգրավմամբ,
3. Զարգացնել զբոսաշրջւթյունը,
4. Զարգացնել փոքր և միջին ձեռնարկատիրությունը,
5. Զարգացնել գյուղատնտեսությունը:

### 3.2 Համայնքի զարգացման ամիջական նպատակներ

Համայնքի զարգացման ամիջական նպատակներն են.

1)գործարար միջավայրի բարելավման միջոցով խթանել համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թվի աճը և ոչ գյուղատնտեսական բնագավառում զբաղվածության աճը,

2)«Գույքի կառավարման ծրագրին »

համապատասխան իրականացնել համայնքի գույքի և ֆինանսների կառավարումը

3)նախադպրոցական կրթության և արտադպրոցական հաստատություններում բարեկարգ և

նպաստավոր ապահովելով խթանել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիրակության կազմակերպումն ու հաստատություններ հաճախող երեխաների թվի աճը

4)ապահովելով երիտասարդության ներգրավումը համայնքապետարանի կողմից կազմակերպվող մշակութային միջոցառումներին և այցելությունները համայնքից դուրս մշակութային օջախներ՝ խթանելով ակտիվ մշակութային և մարզական կյանքը

5) սոցիալական ծրագրերի միջոցով խթանել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը,

6) մարզական խմբակների ավելացման միջոցով խրախուսել ֆիզիկական կուլտուրան և առողջ ապրելակերպը,

7) բնակիչներին հողամասեր հատկացնելով `բնակելի տներ կառուցելու նպատակով համայնքում խթանելով բնակարանային շինարարությունը,

8) Վերանորոգելով բազմաբնակարան շենքերի տանիքներն ու մուտքերը,բարեկարգելով բակային հատվածները հատվածները ,ընդլայնելով կանաչապատ տարածքները և սանիտարական մաքրումը ,աղբահանությունը համայնքի բարեկարգումը և կանաչապատումը, ինչպես նաև համայնքի գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը

9) Բարեկարգելով , խչապատելով ճանապարհները ,փողոցային լուսավորությամբ տեղակայմամբ խթանել համայնքի ճանապարհային երթևեկությունը,բնակչության տեղաշարժը,

10) Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարման միջոցով աջակցել պետության պաշտպանության իրականացմանը,

11) Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբի առկայությամբ ,արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով

կազմակերպվող վարժանքների ,կամավորական փրկարարական միավորումների ստեղծմամբ և ուսուցման կազմակերպմամբ նպաստել աղետների ռիսկների նվազեցմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,

12) Հողերի խոշորացման և նպատակային օգտագործման ,ոռոգման ցանցի առկայության միջոցով խթանել գյուղատնտեսության զարգացումը,

13) Համայնքում շաբաթօրյակների և ծառատունկների հաճախակի կազմակերպման միջոցով ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը,

14) Փառատոնների կազմակերպման ,պատմամշակութային և բնական հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության տարածման ,ինչպես նաև Շաղատ համայնքի ճանաչելիության բարձրացման նպատակով առանց սոցիալական հարթակներում գովազդման միջոցով խթանել զբոսաշրջության զարգացումը

15) Համայնքի միջոցներով ապահովել երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի միջոցառումների կազմակերպումը,

16) Աջակցելով 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին խթանել համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը ,

17) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը ,արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը

18) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,

19) բնակիչների իրազեկվածության միջոցով նպաստել համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը,

20) բնակչության վստահության բարձրացման միջոցով խթանել բարեգործությունը՝ համայնքում մշակութային ,կրթական, առողջապահական ,մարզական սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման ,ֆինանսավորման ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ համայնքի զարգացման

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
## «Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">համայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային հանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ:</td><td colspan="7">Ճանապարհների բարելավում, տրասպորտի անխափան երթևեկություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>վատ</td><td>լավ</td><td>վավ</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրիմիջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Փողոցային լուսավորության առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
<tr><td colspan="7">2. Մայթերի և հեղեղատարների առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>չկա</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ճանապարհների հարթեցում, դաշտամիջյան ճանապարհների սողանքների վերացում<br>1.2. ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում,<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.. հեղեղատարների կառուցում<br>2.2.. Մայթերի կառուցում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր<br>Կապիտալ ծախսեր 10000.0<br>Ընդհանուր բյուջեն 10000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դրամական միջոցների առկայություն,մարդկային ռեսուրս, տրանսպորտ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի և համայնքի երթևեկող տրանսպորտ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018-2019</td></tr>
<tr><td>Ծրագրիհամառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ծրագրի նպատակն է, որպեսզի ապահովվի տրանսպորտի անխափան երթևեկությունը, հեղեղատարների և մայթերի առկայություն, փողոցային լույսերի ապահովում</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Բնական բույսերի մթերման կետի ստեղծում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Մթերման կետի ստեղծում բույսերի համար</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշների առկայություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.Մթերման համար հարմար սենյակի առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշների առկայություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
<tr><td colspan="7">2.Աշխատակցի առկայություն, կահավորված սենյակ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ առկայություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>Սենյակի մաքրում, լուսամուտների մթնեցում,ցածր ջերմաստիճանի ապահովում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.2.Կահավորված և համապատասխան աշխատողով սենյակ:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր 300000<br>Կապիտալ ծախսեր`<br>Ընդամենըծախսեր` 300000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Բույսեր հավաքող կանայք</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսավորման բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի կին բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2019-2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի կանայք ամբողջ սեզոնի ընթացքում հավաքում են համայնքի դաշտերում աճած վայրի բույսերը, որը ավելի հարմար գնով ծախելու համար, պետք է տեսակավորվի և պահպանվի մինչև հանձնի արտադրամաս:Դրա համար անհրաժեշտ է համայնքում ստեղծել մթերման կետ:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Մշակույթի տան բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդների ներգրավմամբ | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Վերանորոգված մշակույթի տուն | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0 | 150քմ | 150քմ | 150քմ | 150քմ |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Փոխված դռներ | | | | | | |
| | Ցուցանիշներ Վերանորոգված հատվածի հարաբերություն ընդհանուր տարածքի հետ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 0 | 100% | 100% | 100% | 100% |
| | 2. Վերանորոգված հատակ և պատեր | | | | | | |
| | Ցուցանիշներ Վերանորոգված հատվածի հարաբերություն ընդհանուր տարածքի հետ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 0 | 100% | 100% | 100% | 100% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>պատերի հարդարում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.2.150քմ տարածքի վերանորոգում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր 200000<br>Կապիտալ ծախսեր՝1000000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսավորման բացակայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մշակույթի տունը գտնվում է համայնքապետարանի շենքում: Շենքը կառուցված է 1973 թվականին, ունի վերանորոգման կարիք: Տարածքն ունի 150քմ մակերես: Վերանորոգումից հետո բնակչության 80% -ը կունենա ակտիվ մշակութային կյանք: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Համայնքի նպաստառուներին սեզոնային աշխատանքով ապահովում»

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Հավելյալ եկամուտների ապահովում նպաստառուների և բազմազավակ ընտանիքների համար</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Հավելյալ եկամուտներ (%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>100</td><td>100</td><td>102</td><td>105</td><td>110</td><td>115</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Հաշվառված շահառուներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Հաշվառված շախառուների հարաբերությունը սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր թվում (%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>100</td><td>100</td><td>102</td><td>105</td><td>110</td><td>115</td></tr>
<tr><td colspan="7">2. Սեզոնային աշխատանք նպաստառուներին և բազմազավակ ընտանիքներին</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Ամիս</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>8</td><td>8</td><td>8</td><td>8</td><td>8</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Հաշվառված գործազուրկների ցուցակը ճշտել:<br>1.2. Վարելահողի առկայություն<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Նպաստառուներին տրամադրել գումար հողամասերի մշակման նպատակով:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝300.0<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝300.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">ֆինանսավորում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">սահմանամերձ համայնքներին՝ առաջնահերթության տրամադրմամբ պայմանավորված ֆինանսական միջոցների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017 -2021թթ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքում գործազուրկ , նպաստառու և բազմազավակ ընտանիքները պետության կողմից</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | վարձատրվում են, իրենց իսկ վարելահողերը մշակելու համար: |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Համայնքի ոռոգման ջրատար առուների մաքրում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի սանիտարական մաքրում և բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքի ոռոգման ջրատար առուների աշխատանքի ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Մաքրված առուներ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| | 2. Շահագործված առուներ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Ոռոգման առուների մաքրում ձեռքի գործիքներով<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Մաքրված առուների ընթացիկ շահագործում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 500000<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝ 500000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017 -2021 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի տարածքում ոռոգման ջուրը անցնում է ոչ թե խողովակաշարով, կամ կառուցապատված դրենաժներով, այլ մարդկանց կողմից փորված բնական առուներով, որոնք ամեն տարի ունեն մաքրման կարիք:Այս աշխատանքը հիմնականում կազմակերպվում է շաբաթօրյակների միջոցով: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Ճանապարհային նշանների տեղադրում, կանգառների կառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ճանապարհային նշաններով և կանգառներով ապահովված ճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշների առկայությունը</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>առկա չէ</td><td>առկա չէ</td><td>առկա է</td><td>առկա է</td><td>առկա է</td><td>առկա է</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Ճանապարհային նշաններով կահավորված ճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>Անհրաժեշտ կահավորման առկայություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>40%</td><td>40%</td><td>75%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td></tr>
<tr><td colspan="7">2. Կանգառներով կահավորված ճանապարհ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>Կանգառների քանակ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>1</td><td>3</td><td>3</td><td>3</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Ճանապարհային նշանների ձեռք բերում տեղադրում<br>1.2.<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Կանգառների կառուցում<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1800000<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝ 1800000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2018 -2019</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնք տանող ճանապարհների վրա չկան ճանապարհային երթևեկության անվտանգությունը ապահովող նշաններ, չկա համայնքի անվանման և պատմամշակութային կոթողների մասին ցուցանակներ:Համայնքը չունի երթուղային տրանսպորտ և համայնքի բնակիչները շատ երկար կանգնում են առանց պատսպարվելու շրջկենտրոն գնալու համար:Կանգառների և ճանապարհային նշանների առկայությունը անհրաժեշտություն է:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**«Ծառատունկ»**

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | 2.5կմ ճանապարհամերձ ծառուղու ստեղծում | | | | | | |
| | Ցուցանիշների առկայությունը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | չկա | կա | կա | կա | կա | կա |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Ճանապարհամերձ ծառուղում տնկիների առկայություն | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0.5 | 1 | 2 | 2.5 | 2.5 |
| | 2. Բարեկարգ ճանապարհամերձ ծառուղի | | | | | | |
| | Ցուցանիշներ կմ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0.5 | 1 | 2 | 2.5 | 2.5 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. տնկիների ձեռքբերում<br>1.2. ծառատունկի կազմակերպում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Ծառուղու շարունակական խնամքի ապահովում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր 700000<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝700000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսավորման աղբյուրը | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017 -2021 | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Պետության կողմից տրամադրվող ՎՀԱ-ծրագրի շրջանակներում մեր համայնքում ևս կատարվում են ծառատունկ և ապահովվում շրջակա միջավայրի պահպանությունը։ | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Զբոսաշրջության զարգացման խթանում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Հավելյալ եկամուտների աճի ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ Աճ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 100 | 102 | 105 | 128 | 110 | 115 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Համայնքում զբոսաշրջության զարգացման ծրագիր | | | | | | |
| | Ցուցանիշներ առկայություն | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | չկա | կա | կա | կա | կա | կա |
| | 2. Զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում | | | | | | |
| | Ցուցանիշներ Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | -- | 10 | 25 | 40 | 60 | 100 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Զբոսաշրջային հնարավորությունների ուսումնասիրություն<br>1.2.Զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 350000 0(Առաջին միջանկյալ արդյունքի ապահովման ֆինանսավորում)<br>Կապիտալ ծախսեր՝ 0<br>Ընդհանուր բյուջեն՝3500000(Առաջին միջանկյալ արդյունքի ապահովման ֆինանսավորում) | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Հավելյալ ֆինանսական միջոցներ՝ զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ֆինանսական միջոցների բացակայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021 | | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Հաշվիառնելովհամայնքումզբոսաշրջությանզարգացմանհամարառկաչօգտագործվողներուժիառկայություն զբոսաշրջության զարգացման կոմպլեքս ծրագրի մշակումն ու իրականացումը հավելյալեկամուտներիհնարավորությունկընձեռնիհամայնքաբնակներին: |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Համայնքում ֆուտբոլի դաշտի և սպորտ հրապարակի կառուցում»

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ:</td><td colspan="7">Մարզական խմբակների ավելացման միջոցով զարգացնել ֆիզիկական կուլտուրան և առողջ ապրելակերպը</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրիմիջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Խաղահրապարակի և ֆուտբոլի դաշտի առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td colspan="7">2. երեխաների և երիտասարդների խմբերի առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>բավ.</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Խաղահրապարակի և ֆուտբոլի դաշտի հարթեցում ,<br>1.2. Խաղահրապարակի և ֆուտբոլի դաշտի ցանկապատում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. հայտերի ընդունում<br>2.2. Խմբակների ստեղծում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր<br>Կապիտալ ծախսեր 5000.0<br>Ընդհանուր բյուջեն 5000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դրամական միջոցների առկայություն, մարդկային ռեսուրս, տրանսպորտ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների սղություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի և հարակից համայնքների բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017</td></tr>
<tr><td>Ծրագրիհամառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ծրագիրը իրականացվելու է ՇԵՆ բարեգործական հիմնադրամի կողմից ,խաղադաշտը համապատասխանում է իր չափորոշիչներին ,որը հնարավորություն կտա խմբակների ստղծման և ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների թվի ավելացում</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## «Շաղատ համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի վերանորոգում»

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ:</td><td colspan="7">Համայնքում նախակրթության որակի բարելավում և ապահովում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ չափորոշիչներին համապատախան</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չի համապ.</td><td>համ.</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրիմիջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Վերանորոգված սենյակների առկայություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
<tr><td colspan="7">2. Երեխաների քանակի և խմբերի ավելացում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>45 երեխա</td><td>70</td><td>70</td><td>70</td><td>70</td><td>70</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. ներսի պատերի հարդարում<br>1.2.պատուհանների և դռների փոխում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Նոր խմբերի բացում<br>2.2. հայտերի ընդունում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝4000.0<br>Ընդհանուր բյուջեն4000.0՝</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դրամական միջոցների առկայություն,մարդկային ռեսուրս,շինանյութեր և նյութատեխնիկական ռեսուրսներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">հարակից համայնքներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">համայնքի նախադպրոցական տարիքի երեխաներ ,բնակչություն</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017</td></tr>
<tr><td>Ծրագրիհամառոտ նկարագրություն</td><td colspan="7">Մանկապարտեզը կառուցվել է 1973թ-ին : Շենքը երկհարկանի է, որտեղ հաճախում են 45 երեխա ,գործում է երկու խումբ՝ ավագ և միջին : Առաջին հարկը վերանորոգված է : Երկրորդ հարկը վերանորոգելուց հետո կավելանա ևս մեկ խումբ, որը հնարավորություն կտա մանկապարտեզ հաճախելու դուրս մնացած 20 համայնքաբնակ և հարևան համայնքների երեխաների:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
## «Համայնքի շրջակա միջավայրի պահպանություն»
(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ:</td><td>Համայնքը կգտնվի բարեկեցիկ վիճակում
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td><td>կա</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ծրագրիմիջանկյալ արդյունքներ</td><td>1.Աղբահանության առկայություն
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
</table>
2.Համայնքում կանաչ տարածքների ավելացում
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>չկա</td><td>չկա</td><td>կա</td><td>լավ</td><td>լավ</td><td>լավ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Աղբատար տրանսպորտի ձեռք բերում<br>1.2. Աղբահանության կազմակերպում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Գյուղ գործիքների ձեռք բերում<br>2.2. Տարածքների կանաչապատում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 6000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 6000.0՝</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td>Դրամական միջոցներ,մարդկային ռեսուրս,տրանսպորտ,շին մատերիալի ձեռք բերում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնք և հարակից համայնքներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2018</td></tr>
<tr><td>Ծրագրիհամառոտ նկարագրություն</td><td>Ծրագիրը նախատեսվում է իրականացնելհամայնքի ղեկավարի կողմից,որպեսզի միջավայրը լինի մաքուր,բարեկեցիկ ,կանաչապատված,ծրագրի կատարումով կավելանա աշխատատեղեր, կընդգրկվեն համայնքի բնակիչներ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## « Համայնքի գրադարանի վերանորոգում »

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակորպումը ՝ երիտասարդության ներգրավմամբ | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ: | Ապահովել երիտասարդության ներգրավումը համայնքապետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | բավ | բավ | բավ | բավ | լավ | լավ |
| Ծրագրիմիջանկյալ արդյունքներ | 1. Գրադարանից օգտվողների աճի առկայություն | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | բավ | բավ | բավ | բավ | լավ | լավ |
| | 2. Նոր գրապահարանների առկայություն և գրքերի աճ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | բավ | բավ | բավ | բավ | լավ | լավ |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ներքին հարդարման աշխատանքներ<br>1.2. Պատուհանների և դռների փոխում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Գրադարանից օգտվողների աճ<br>2.2. Ընթերցումների կազմակերպում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 6000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 6000.0՝ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Դրամական միջոցներ,մարդկային ռեսուրս,տրանսպորտ,շին մատերիալի ձեռք բերում | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնք և հարակից համայնքներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018 | | | | | | |
| Ծրագրիհամառոտ նկարագրություն | Ծրագրի նպատակն է ,որպեսզի համայնքի բնակչությունը էլ ավելի հաճախակի օգտվի գրադարանից: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
## Համայնքում կաթի ընդունման կետի վերագործարկում

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Գոծարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ: | Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սյուբեկտների թվի աճ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | չկա | կա | կա | կա | կա | կա |
| Ծրագրիմիջանկյալ արդյունքներ | 1. Աշխատատեղերի բացում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | չկա | կա | կա | կա | կա | կա |
| | 2. դրամական միջոցների բարելավում | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | չկա | բավ. | լավ | լավ | լավ | լավ |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.հայտերի ընդունում<br>1.2.<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Կաթի ընդունում<br>2.2. Պանիրի արտադրություն | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝600000<br>Ընդհանուր բյուջեն600000 | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Դրամական միջոցների առկայություն,մարդկային ռեսուրս,տրանսպորտ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների բացակայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017 | | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրիհամառոտ նկարագրություն | Ծրագիրը նախատեսվում է համայնքի ղեկավարի կողմից , որպեսզի բնակչությունը վաճառի կաթ և ստանա դրամական միջոցներ: Համայնքում ավելանան աշխատատեղեր: |

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## « Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում»

(Ծ ր ա գ ր ի ա ն վ ա ն ու մ)

| Գ ա ր տ ա ղ ի ր խ ն դ ի ր , ո ր ի լ ու ծ մ ա ն ն է մ ի տ վ ա ծ ծ ր ա գ ի ր ը | Համայնքի բնակավայրերի կառուցապատում,բարեկարգումը և կանաչապատումը կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը |
|---|---|

**Ծ ր ա գ ր ի ա ն մ ի ջ ա կ ա ն ն պ ա տ ա կ**

Խմելու ջրով ապահովում

| Ց ու ց ա ն ի շ ն ե ր | Ե լ ա կ ե տ ա յ ի ն ա ր ժ ե ք | Թ ի ր ա խ ա յ ի ն ա ր ժ ե ք ն ե ր | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 50% | 50% | 100% | 100 | 100 | 100 |

**Ծ ր ա գ ր ի մ ի ջ ա ն կ յ ա լ ա ր դ յ ու ն ք ն ե ր**

1. Խմելու ջրով ապահոված բնակչություն

| Ց ու ց ա ն ի շ ն ե ր | Ե լ ա կ ե տ ա յ ի ն ա ր ժ ե ք | Թ ի ր ա խ ա յ ի ն ա ր ժ ե ք ն ե ր | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 50% | 100 | 100 | 100 | 100 | 100 |

2. Խմելու որակյալ ջրի առկայություն

| Ց ու ց ա ն ի շ ն ե ր | Ե լ ա կ ե տ ա յ ի ն ա ր ժ ե ք | Թ ի ր ա խ ա յ ի ն ա ր ժ ե ք ն ե ր | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 0 | 0 | 100 | 100 | 100 | 100 |

| Ծ ր ա գ ր ի հ ի մ ն ա կ ա ն գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ր ը | 1-ի ն մ ի ջ ա ն կ յ ա լ ա ր դ յ ու ն ք ն ա պ ա հ ո վ ո ղ գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ր<br>1.1.Վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը<br>1.2.Փոխարինել 8 կմ երկարության խողովակաշարը<br><br>2-ր դ մ ի ջ ա ն կ յ ա լ ա ր դ յ ու ն ք ն ա պ ա հ ո վ ո ղ գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ր<br>2.1.կ ատարել խմելու ջրի ֆիլտրում և մանրաէազերծում<br>2.2. |
|---|---|
| Ծ ր ա գ ր ի բ յ ու ջ ե ն | Ը ն թ ա ց ի կ ծ ա խ ս ե ր 26500000<br>Կ ա պ ի տ ա լ ծ ա խ ս ե ր 7000000`<br>Ը ն դ հ ա ն ու ր բ յ ու ջ ե ն` 33500000 |
| Ծ ր ա գ ր ի ի ր ա կ ա ն ա ց մ ա ն հ ա մ ա ր ա ն հ ր ա ժ ե շ տ ա յ ի ռ ե ս ու ր ս ն ե ր | Աշխատուժ , մեխանիզացիա ,գործիքներ |
| Ծ ր ա գ ր ի հ ի մ ն ա կ ա ն ռ ի ս կ ե ր ը | Գումարի սղություն |
| Ծ ր ա գ ր ի հ ի մ ն ա կ ա ն շ ա հ ա ռ ու ն ե ր ը | Շաղատ համայնքի 1100 բնակիչներ |
| Ծ ր ա գ ր ի ս կ ի զ բ և ա վ ա ր տ | 2017- 2021 |
| Ծ ր ա գ ր ի հ ա մ ա ռ ո տ ն կ ա ր ա գ ր ու թ յ ու ն | Կազմել ծրագրային նախագիծ:Գտնել դոնոր կազմակերպություն :Գրել գրանտային ծրագիր և ներկայացնել դոնոր կազմակերպությանը:Հավանության արժանանալուց հետո ստանալ համապատասխան ֆինանսավորումը և կազմակերպել խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները: |

(2017-2021

| Պարտադիր խնդիր | Բյուջետավորված միջոցներ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ |
| 1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում | 6300000 | 6300000 | | 2100000 | 2100000 | 2100000 | | | |
| 2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում | | | | | | | | | |
| 3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն | 4000000 | 4000000 | | | | | 1000000 | 0 | 0 |
| 4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ | 3200000 | | 3200000 | | | | 500000 | 0 | 0 |
| 5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | 300000 | 600000 | 600000 | 600000 | | 600000 | 400000 | | |
| 6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը | 5000000 | 5000000 | | | | | 1500000 | 0 | 0 |
| 7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը | | | | | | | | | |
| 8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը | 49[illegible] | | 337[illegible] | [illegible]000000 | | | 0 | 0 | 0 |

թթ.)

| ... աղբյուրներ | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բարեգործություն/ նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցու-թյուն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| | 6300000 | | 2300000 | 4000000 | | | | |
| | | | | | | | | |
| 0 | 4000000 | | | 4000000 | | | | |
| 0 | 3200000 | 0 | 0 | 3200000 | | | | |
| 3000000 | | | 3000000 | 2500000 | | | | |
| 5000000 | | 0 | | 5000000 | | | | |
| | | | | | | | | |
| 0 | 40700000 | 0 | 26500000 | 14200000 | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում | 11800000 | | 5000000 | 5000000 | | | 0 | 0 | 0 |
| 10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը | | | | | | | | | |
| 11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում | | | | | | | | | |
| 12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը | | | | | | | | | |
| 14. Ջրռաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում | 3500000 | 700000 | 700000 | 7000000 | 700000 | 700000 | | | |
| 15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում | | | | | | | | | |
| 16. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում | | | | | | | | | |
| 17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում | | | | | | | | | |
| 19. Բարեգործության խթանում | | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 1000000 | 0 | 0 | 10000000 | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | 3500000 | 3500000 | 3500000 | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՂՅՈՒՍԱԿ

[illegible]

| [illegible] | Ցուցանիշի փաստացի արժեք (2015) | Ցուցանիշի [illegible] արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը: Միջանկյալ | Տարեկան | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] | 5% | 5% | 5% | 5% | 5% | 5% | 5% | 5% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 3% | 3% | 3% | | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 1% | 3% | 3% | 3% | 3% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | 4% | | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 5 | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | x | [illegible] | Զեկույց |
| 1. [illegible] | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | կա | | | | |
| 2. [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3. [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] | | | կա | | | կա | | | կա | | | կա | | | կա | | | | | | |
| [illegible] | 2.50% | 2% | 2% | | | 2% | | | 2% | | | 2% | | | 2% | | | | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | լավ | լավ | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | | | 0 | | | 0 | | | 0 | | | 0 | | | | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | | | 0 | | | | | | | | | | | | | | [illegible] | [illegible] |
| 4. [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] | 12 | 12 | 12 | | | 13 | | | 14 | | | 15 | | | 15 | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 2 | 2 | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 20% | 20% | 20% | | | 20% | | | 20% | | | 20% | | | 20% | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | լավ | լավ | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | ոչ | ոչ | ոչ | | | ոչ | | | ոչ | | | ոչ | | | ոչ | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 4 | 4 | 4 | | | 6 | | | 6 | | | 7 | | | 7 | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 7300 | 7300 | 7300 | 7300 | 7300 | 7400 | 7400 | 7400 | | | | | | | | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 5% | 5% | 5% | | | 5% | | | 8% | | | 8% | | | 8% | | | | | [illegible] | [illegible] |
| 5. [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6. [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] | 0 | 0 | 4 | | | 4 | | | 4 | | | 5 | | | 5 | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 35% | | | 35% | | | 40% | | | 40% | | | 40% | | | | | [illegible] | [illegible] |
| [illegible] | անբավարար | անբավարար բավարար | | | | լավ | | | լավ | | | լավ | | | լավ | | | | | [illegible] | [illegible] |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | | | |
| [illegible] | 15% | 15% | 15% | 10%% | 10% | 10% | 10% | x | [illegible] | [illegible] |
| 8. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | կա | կա | կա | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | կա | կա | կա | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | կա | կա | կա | կա | կա | կա | կա | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | վատ | վատ | վատ | վատ | վատ | վատ | վատ | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | բավարար | բավարար | բավարար | բավարար | բավարար | լավ | լավ | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | լավ | լավ | լավ | լավ | լավ | լավ | լավ | | | [illegible] |
| [illegible] | վատ | վատ | վատ | վատ | վատ | վատ | վատ | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 2% | 2% | 3% | 5% | 7% | 8% | 10% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | չկա | կա | կա | x | [illegible] | [illegible] |
| 9. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | բավարար | բավարար | լավ | լավ | լավ | լավ | լավ | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 10% | 10% | 10% | 20% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 2% | 2% | 2% | 5% | 5% | 5% | 8% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | | [illegible] | [illegible] |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | | | | | | | | x | [illegible] | [illegible] |
| 11. [illegible] | | | | | | | | | | |
| 12. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 1% | 3% | 3% | 4% | 6% | 8% | 10% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 3% | 4% | 6% | 8% | 10% | 10% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 51% | 41% | 45% | 45% | 50% | 51% | 55% | x | [illegible] | [illegible] |
| 13. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 2% | 2% | 2% | 5% | 5% | 5% | 5% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | բավարար | բավարար | բավարար | լավ | լավ | լավ | լավ | x | [illegible] | [illegible] |
| 14. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | չկա | չկա | չկա | կա | կա | կա | կա | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | 100% | 10% | 15% | 20% | x | [illegible] | [illegible] |
| 15. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 2 | 2 | 3 | 3 | 3 | 5 | 5 | x | [illegible] | [illegible] |
| 16. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 1.00% | 2% | 3% | 4% | 5% | 5% | 5% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | 1% | 3% | 3% | 5% | [illegible] | [illegible] | [illegible] | x | [illegible] | [illegible] |
| 17. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 0% | 0% | 0% | 0 | 0% | 0% | 0% | x | [illegible] | [illegible] |
| [illegible] | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | չկա | x | [illegible] | [illegible] |
| 18. [illegible] | | | | | | | | | | |
| [illegible] | 80% | 80% | 82% | 85% | 85% | 85% | 85% | | [illegible] | [illegible] |
| [illegible] | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% | | [illegible] | [illegible] |
| 19. [illegible] | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | 0 | 0 | 0 | | | 2% | | 3% | | | 3% | | 5% | | | | X | [illegible] | [illegible] |
| [illegible] | 0 | 0 | 0 | | | 2 | | 3 | | | 3 | | 3 | | | | X | [illegible] | [illegible] |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] 1 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] 2 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| [illegible] 3 | | | | | | | | | | | | | | | | | | | |

‹

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք, գյուղ Շաղատ 093052244 shaghatg@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 32-Ա
**21 դեկտեմբերի 2016 թվական**

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի , « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի , «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի , «Հայաստանի Հանրապետության օրոնսդիր ,գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի դրույթներով ,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով ՝ կողմ՝4, դեմ՝0, ձեռնպահ՝0 , ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ամսական 200000 /երկու հարյուր հազար /դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 28-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափի որոշման մասին » N 25-Ա որոշումը:

Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ __________Կ.Հովհաննիսյան
Կողմ՝ __________Վ.Միրզախանյան
Կողմ՝ __________Ա.Պետրոսյան
Կողմ՝ __________Կ.Սարգսյան

Շաղատ համայնքի ղեկավար Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghat.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 33 -Ա
21 դեկտեմբերի 2016 թվականի

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , որոշման նախագծի քվեարկության արդյունքնորով՝ կողմ՝ 4, դեմ՝0, ձեռնպահ՝0 ,ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի և հավելված N 2-ի

2. Ուժը կորցրած ճանաչել Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու 28.12.2015թվականի ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին N 26-Ա որոշումը:

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ________Վ.Հովհաննիսյան
Կողմ՝ ________Վ.Միրզախանյան
Կողմ՝ ________Մ.Պետրոսյան
Կողմ՝ ________Կ.Սարգսյան

Շաղատ գյուղական համայնքի ղեկավար՝ ________ Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք, գյուղ Շաղատ 093052244 shaghatg@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ N 34-Ն
21 դեկտեմբերի 2016 թվական

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16– րդ հոդվածի 18– րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ,որոշման նախագծի կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռպահ՝ 0 քվեարկության արդյունքներով ,ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Սահմանել ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի տարածքում 2016 թ-ի տեղական տուրքերի և վճարումների դրույքաչափերը՝

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի,շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար
ա. Մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական/ամառանոցային/ տների,ինչպես նաև 200 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4500դրամ:
բ.Սույն կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բ.ա. 201-500քմ մակերես ունեցող օբյեկտների համար ՝3000 դրամ:
բ.բ 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝5000 դրամ:
_ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ.մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2010 դրամ:
դ.20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման,վերականգնման արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կառույցների,վերնակառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ 1500դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում եռամսյակի համար՝ 0-2000 դրամ:

5.Համայնքի տարածքում՝
ա. Բացօթյա առևտուր կազմակերպելու համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:
բ. Հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6.Համայնքի տարածքում շինարարության կան շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը հաստատագրելու համար «ՏԻՄ» մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ:
7.«ՏԻՄ» տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու, և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար «ՏԻՄ»-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:
8. Համայնքի տարածքում գովազդների տեղադրման համար՝ 1000-2000 դրամ:
9. Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար սահմանվում է՝
ա.առևտրի օբյեկտի համար՝ 25000 դրամ,
բ.հանրային օբյեկտների և զվարճանքների օբյեկտների համար՝ 50000 դրամ:
10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանվում է՝ 500 դրամ:

Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ________ Վ.Հովհաննիսյան
Կողմ՝ ________ Վ.Միրզախանյան
Կողմ՝ ________ Ա.Պետրոսյան
Կողմ՝ ________ Վ.Սարգսյան

Շաղատ գյուղական համայնքի ղեկավար՝ Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghag@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 35-Ն

21 դեկտեմբերի 2016 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված բյուջեի նախագիծը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով `կողմ` 4, դեմ` 0, ձեռնպահ` 0, ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն, համաձայն հավելվածի:

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ`

Կողմ` ________Ա.Հովհաննիսյան
Կողմ` ________Վ.Միրզախանյան
Կողմ` ________Ա.Պետրոսյան
Կողմ` ________Վ.Սարգսյան

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ղեկավար` Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Շաղատ համայնք գյուղ Շաղատ 093052244 shaghatg@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՇԱՂԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԱՊՐԻԼԻ 11-Ի N 8-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 դեկտեմբերի 2016թ. N 36-Ա

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի , 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի "բ" ենթակետի , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով , « Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով ,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատի գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների ( այսուհետև՝ հանձնածողովներ) յուրաքանչյուր կազմում ընդգրկել համայնքի ավագանու 3 անդամ:

2.Հաստատել հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների հետևյալ անհատական կազմը.

1)Միրզախանյան Արմենակ

2) Պետրոսյան Ալիսա

3) Սարգսյան Կամո

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 11-ի N 8- Ա որոշումը:

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ______Վ.Հովհաննիսյա
Կողմ՝ ______Վ.Միրզախանյան
Կողմ՝ ______Ա.Պետրոսյան
Կողմ՝ ______Կ.Սարգսյան

ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ համայնքի ղեկավար՝ Տ.Խաչատրյան

21.12.2016թ.
գ.Շաղատ